

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2021

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 8

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1

Բնական աշխարհահամակարգ է:

- 1) քաղաքը
- 2) ջրամբարը
- 3) արոտավայրը
- 4) ճահիճը

2


Ընտրել մոլորակների ճիշտ շարքը՝ ըստ Արեգակից ունեցած հեռավորության:

- 1) Արուսյակ, Փայլածու, Երկիր, Հրատ, Լուսնթագ, Երևակ, Նեպտուն, Ուրան
- 2) Փայլածու, Արուսյակ, Երկիր, Հրատ, Լուսնթագ, Երևակ, Նեպտուն, Ուրան
- 3) Հրատ, Փայլածու, Երկիր, Արուսյակ, Լուսնթագ, Երևակ, Նեպտուն, Ուրան
- 4) Փայլածու, Երկիր, Արուսյակ, Հրատ, Լուսնթագ, Երևակ, Նեպտուն, Ուրան

3

Նկար 1- ում պատկերված է.

- 1) հորիզոնական
- 2) համադրման սանդղակ
- 3) ռելիեֆի կտրվածք՝ պրոֆիլ
- 4) լեռնագիծ



նկար 1

4

Հյուսիսային կիսագնդում ծառի կամ քարի ո՞ր կողմն է առավել շատ մամուկալված.

- 1) արևելյան
- 2) հարավային
- 3) արևմտյան
- 4) հյուսիսային

5

Արեգակի շուրջը պտտվելիս Երկիրը մերձակետում լինում է.

- 1) հուլիսի 5-ին
- 2) մարտի 21-ին
- 3) հունիսի 22-ին
- 4) հունվարի 3-ին

6

1 : 900 000 մասշտաբի քարտեզում երկու կետերի հեռավորությունը 4 սմ է: Դրանց իրական հեռավորությունը կլինի.

- 1) 36 կմ
- 2) 360 կմ
- 3) 3600 կմ
- 4) 3,6 կմ

7

Ի՞նչ ծագման ապարներ են պեմզան ու պեռլիտը:

- 1) փոխակերպային
- 2) օրգանական նստվածքային
- 3) անօրգանական նստվածքային
- 4) հրային


8

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Հարթավայրեր առաջանում են ջրիկ մագմայի արտահոսման պատճառով:
- 2) Ծալքաբեկորավոր լեռներն առաջացել են տեկտոնական շարժումների հետևանքով:
- 3) Երկրագնդի վրա առավել հաճախ երկրաշարժեր լինում են պլատֆորմներում:
- 4) Աշխարհագրական թաղանթի առաջացման և զարգացման ամբողջ ընթացքը բաժանվում է 3 փուլի՝ երկրաբանական, կենսաբանական, մարդածին:

9

Նկար 2 – ում ո՞ր թվով է նշված հարավային բարեխառն ջերմային գոտին:



նկար 2

- 1) 2
- 2) 3
- 3) 4
- 4) 1

10

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Հարավային Ամերիկայի արևմտյան ափերի կլիմայի վրա բացասական ազդեցություն ունի Պերուական ծովային հոսանքը:
- 2) Եվրասիայի արևելյան ափերի կլիմայի վրա դրական ազդեցություն ունի Կուրոսիո ծովային հոսանքը:
- 3) Աֆրիկայի արևելյան ափերի կլիմայի վրա դրական ազդեցություն ունի Մոնալիսական ծովային հոսանքը:
- 4) Եվրասիայի արևմտյան ափերի կլիմայի վրա դրական ազդեցություն ունի Հյուսիսատլանտյան ծովային հոսանքը:

11

Գետի լայնակի կտրվածքի մակերեսը 15 մ² է, ջրի արագությունը՝ 2 մ/վ: Որքա՞ն է գետի ջրի ծախսը:

- 1) 30 մ³/վ
- 2) 9,5 մ³/վ
- 3) 45 մ³/վ
- 4) 7,5 մ³/վ

12

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Ամազոն և Կոնգո գետերը հորդանում են գարնանը:
- 2) Ամուդարյա և Սիրդարյա գետերը հորդանում են ամռանը:
- 3) Եփրատ և Տիգրիս գետերը հորդանում են ձմռանը:
- 4) Հուանհե ու Յանցզի գետերը հորդանում են աշնանը:

13

Բնության բաղադրիչների ո՞ր զուգորդությունն է ճիշտ:

- 1) անապատ-սևահող-օշինդր, ուղտափուշ
- 2) տունդրա-կմախքային հող-լորենի, հացենի
- 3) տայգա-պոդզոլային հող-եղևնի, սոճի
- 4) տափաստան-կարմրահող-փետրախոտ, սիզախոտ

14


Ինչպե՞ս է կոչվում ներկայիս երկրաբանական դարաշրջանը:

- 1) Կայնոզոյան
- 2) Մեզոզոյան
- 3) Արխեյան
- 4) Պրոտերոզոյան

15

Մակրնթացության և տեղատվության հերթափոխը աշխարհագրական թաղանթի ո՞ր հատկանիշն է արտահայտում:

- 1) միասնականություն
- 2) ռիթմիկություն
- 3) զոնայականություն
- 4) գոտիականություն



քարտեզ 1

16

Քարտեզ 1-ում ո՞ր կղզին է նշված Բ տառով:

- 1) Սիցիլիա
- 2) Կիպրոս
- 3) Սարդինիա
- 4) Կրետե

17

Քարտեզ 1-ում ո՞ր գետն է նշված Գ տառով:

- 1) Ճորոխ
- 2) Տիգրիս
- 3) Եփրատ
- 4) Ինդոս

18

Ո՞ր շարքում են Եվրասիայի լճերը դասավորված արևմուտքից արևելք ճիշտ հերթականությամբ:

- 1) Սևան, Լադոգա, Բալխաշ, Արալ
- 2) Բալխաշ, Լադոգա, Սևան, Արալ
- 3) Արալ, Սևան, Լադոգա, Բալխաշ
- 4) Լադոգա, Սևան, Արալ, Բալխաշ

19

Հարավային Ամերիկայի հարթավայրերից ո՞րն է սարահարթ:

- 1) Լա Պլատայի
- 2) Պատագոնիայի
- 3) Ամազոնի
- 4) Օրինոկոյի

20

Հյուսիսային Ամերիկա մայրցամաքի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Տոնադոն հատկապես մեծ ավերածություններ է առաջացնում Կենտրոնական Ամերիկայում:
- 2) Կենտրոնական մասում հատկապես արևմուտքից արևելք տարածվում են անտառատափաստաններն ու տափաստանները:
- 3) Մեծ Ավազան սարահարթում տարածվում են կիսաանապատային ու անապատային լանդշաֆտները:
- 4) Առավել մեծ տարածում ունեն անապատներն ու կիսաանապատները:

21


Աֆրիկայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Սպիտակ և Կապույտ Նեդոսները միախառնվում են Ասուան քաղաքի մոտ:
- 2) Նեդոսի հովիտը Սահարայի ամենախոշոր և հնագույն օազիսն է:
- 3) Նեդոսը ստորին հոսանքում լեռնային գետ է:
- 4) Նեդոսը հոսում է միայն հասարակածային, մերձհասարակածային և մերձարևադարձային գոտիներով:

22

Ո՞ր կլիմայական գոտում է գտնվում Գ բնակավայրը՝ ըստ նկար 3-ի:

- 1) հարավային մերձհասարակածային
- 2) հյուսիսային բարեխառն
- 3) հարավային մերձարևադարձային
- 4) հասարակածային



նկար 3

23

Բնութագրումով որոշել մայրցամաքը:

Ամենաչոր մայրցամաքն է: Այստեղ բացակայում են բարձր լեռները, սառցադաշտերը և գործող հրաբուխները: Ո՞ր մայրցամաքի մասին է խոսքը:

- 1) Ավստրալիա
- 2) Անտարկտիդա
- 3) Հարավային Ամերիկա
- 4) Աֆրիկա

24

Քաղաքական քարտեզի ձևավորման նորագույն ժամանակաշրջանի երրորդ փուլի կարևոր իրադարձությունն չէ.

- 1) Գերմանիայի վերամիավորումը
- 2) Չեխոսլովակիայի տրոհումը
- 3) Հարավսլավիայի փլուզումը
- 4) Հնդկաստանի անկախացումը

25

Ո՞ր տարածաշրջանին են առավել շատ բնորոշ երկրաչափական ու աշխարհագրական սահմանները:

- 1) Եվրոպա
- 2) Լատինական Ամերիկա
- 3) Աֆրիկա
- 4) Հարավարևելյան Ասիա

26

Ընտրել «պետություն-կառավարման ձև» համապատասխանությունների ճիշտ շարքը:

- | | |
|-------------|-----------------------------------|
| 1. Կատար | ա. նախագահական հանրապետություն |
| 2. Դանիա | բ. բացարձակ միապետություն |
| 3. Գերմանիա | գ. սահմանադրական միապետություն |
| 4. Բրազիլիա | դ. խորհրդարանական հանրապետություն |

- 1) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ
- 2) 1-դ, 2-ա, 3-բ, 4-գ
- 3) 1-ա, 2-բ, 3-գ, 4-դ
- 4) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա

27

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) «Ժողովրդագրական պայթյունը» բնութագրվում է բնակչության դանդաղ աճով և բնորոշ է զարգացած երկրներին:
- 2) Բնակչության կտրուկ աճի հետևանքով զարգացած երկրներում ստեղծվել է «ժողովրդագրական ճգնաժամ»:
- 3) Բնակչության վերարտադրությունը հիմնականում պայմանավորված է բնակլիմայական պայմաններով:
- 4) Բնակչության վերարտադրության առաջին տիպի երկրներին բնորոշ են ցածր ծնելիությունը, ցածր մահացությունը, ցածր բնական աճը:

28

Բազմազգ պետություն է.

- 1) Հնդկաստանը
- 2) Իտալիան
- 3) Հայաստանը
- 4) Ճապոնիան

29

«Մշակաբույս-առաջատար երկիր» գույգերից ընտրել *սխալը*.

- 1) ձիթենի-Իսպանիա
- 2) եգիպտացորեն-ԱՄՆ
- 3) շաքարեղեգ-Ուկրաինա
- 4) բրինձ-Չինաստան

30

Ո՞րն է Կանադայի մայրաքաղաքը:

- 1) Օտտավա
- 2) Մանագուա
- 3) Հավանա
- 4) Գվատեմալա

31

Ո՞ր գետը չ/ հոսում Ֆրանսիայի տարածքով:

- 1) Լուարը
- 2) Սենը
- 3) Օդերը
- 4) Ռոնը

32

Մեծ Բրիտանիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Խոշոր քաղաքներից են Մանչեստրը և Մայնի Ֆրանկֆուրտը:
- 2) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է:
- 3) Տեքստիլ արդյունաբերության խոշորագույն կենտրոնը Բիրմինգհեմ քաղաքն է:
- 4) Սև և գունավոր մետաղաձուլությունը հիմնականում կենտրոնացված է նավահանգստային քաղաքներում:

33

Իրանի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Հարավկասպիական դաշտավայրը երկրի ամենաչոր շրջանն է:
- 2) Երկրի կենտրոնական շրջաններում գյուղատնտեսության հիմքը ոռոգովի երկրագործությունն է:
- 3) Կասպից ծովի ափամերձ շրջաններում գլխավոր մշակաբույսը փյունիկյան արմավենին է:
- 4) Երկիրը հարուստ է ջրային ու անտառային ռեսուրսներով:

34

Ո՞ր երկիրը աշխարհում առաջատար չէ մեղվաբուծության արտադրանքի ծավալով:

- 1) Մեքսիկա
- 2) Ռուսաստան
- 3) Սաուդյան Արաբիա
- 4) ԱՄՆ

35

Ո՞ր պետությունները Լատինական Ամերիկայում չեն գտնվում:

- 1) Արգենտինան և Չիլին
- 2) Կուբան և Գվատեմալան
- 3) Պարագվայը և Բրազիլիան
- 4) Լիբիան և Մարոկկոն

36

Ո՞ր տարածաշրջաններում է տարածվում անագի գոտին:

- 1) Հյուսիսային և Հարավային Եվրոպա
- 2) Լատինական և Հյուսային Ամերիկա
- 3) Հարավարևելյան և Հարավային Ասիա
- 4) Հարավային և Արևելյան Աֆրիկա

37

ԱՄԵԱՆԻ - ի անդամ երկրներ են.

- 1) Չինաստանը և Վրաստանը
- 2) Ավստրալիան և Թուրքիան
- 3) Ռուսաստանը և Ճապոնիան
- 4) Ինդոնեզիան և Սինգապուրը

38

Բնակչության թվով գերխոշոր երկիր է.

- 1) Պերուն
- 2) Մեքսիկան
- 3) Գանան
- 4) Ավստրալիան

39

ԱՄՆ - ին են պատկանում.

- 1) Հավայան կղզիները
- 2) Կուրիլյան կղզիները
- 3) Ֆոլկլենդյան կղզիները
- 4) Բահամյան կղզիները

40


Լատինական Ամերիկայի տեղաբնիկ ժողովուրդներից չեն.

- 1) ացտեկները
- 2) ինկերը
- 3) բուշմենները
- 4) մայաները

41

«ԼՃեր-գոգավորության ծագում» գույգերից ընտրել *սխալը*:

- 1) Քարի, Սև-սառցադաշտային
- 2) Սևանա, Վանա-տեկտոնահրաբխային
- 3) Ուրմիա, Ակնա-սողանքապատվարային
- 4) Փարվանա, Խանչալի-հրաբխային



քարտեզ 2

42

Քարտեզ 2-ում n° ը լեռնաշղթան է նշված Բ տառով:

- 1) Չանգեզուրի
- 2) Մեղրու
- 3) Բարգուշատի
- 4) Վայքի

43

Քարտեզ 2-ում n° ը լեռնանցքն է նշված Դ տառով:

- 1) Որոտանի
- 2) Վարդենյաց
- 3) Քաջարանի
- 4) Սևանի

44

Հրաբխային լեռնագագաթների ո՞ր գույգն է գտնվում Հայկական հրաբխային բարձրավանդակի հարավային մասում:

- 1) Արագած, Աժդահակ
- 2) Աբուլ, Ծաղկավետ
- 3) Սրմանց, Սիփան
- 4) Վարդենիս, Իշխանասար

45

Մերձալպյան և ալպյան մարգագետիններում մեծ տարածում ունեն.

- 1) փետրախոտը, շյուղախոտը, կորնզանը
- 2) գայլաթաթը, երեքնուկը, անմոռուկը
- 3) մասրենին, գազը, աբեղախոտը
- 4) օշինդրը, աղածաղիկը, ուղտափուշը

46

Արարատյան դաշտի գրունտային ջրերի բարձր մակարդակը ո՞ր հողերի առաջացման պատճառ է:

- 1) լեռնաշագանակագույն
- 2) կիսաանապատային գորշ
- 3) մարգագետնատափաստանային
- 4) ադուտ-ալկալի

47

Արմավիրի մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Մեծ է գյուղական բնակչության տեսակարար կշիռը:
- 2) Մարզկենտրոնը մարզի ամենամեծ քաղաքն է:
- 3) Բնակչության խտությունը արևմուտքից արևելք շարժվելիս նվազում է:
- 4) ՀՀ առավել խտաբնակ մարզերից է:

48

ՀՀ տուֆի արդյունահանման խոշոր կենտրոն է.

- 1) Թալինը
- 2) Մարալիկը
- 3) Արթիկը
- 4) Ապարանը

49

ՀՀ-ում մետաղական ալյումինի արտադրությանն առավելապես նպաստել է.

- 1) Սևան-Հրազդան ջրեկների կասկադի կառուցումը
- 2) տնտեսության տարբեր ճյուղերի կողմից ալյումինի պահանջարկի մեծացումը
- 3) գունավոր մետաղաձուլության տարբեր ճյուղերի զարգացումը
- 4) նեֆելինային սիենիտների հարուստ պաշարների առկայությունը

50

ՀՀ գյուղատնտեսության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Հացահատիկային ցանքատարածություններում գերակշռում է աշնանացան ցորենը:
- 2) Խաղողի մշակության վերին սահմանը 2100-2200 մ բացարձակ բարձրություններն են:
- 3) Ծիրանենու մշակության գլխավոր շրջաններից է Լոռվա սարահարթը:
- 4) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը անասնապահությունն է:

51

Բնական ռեսուրսների ընդհանուր քանակի (պաշարների) հարաբերակցությունը դրանց տարեկան օգտագործման քանակին կոչվում է.

- 1) ռեսուրսաապահովվածություն
- 2) ռեսուրսների ռացիոնալ օգտագործում
- 3) ռեսուրսախնայողություն
- 4) ռեսուրսների տնտեսական գնահատում

52

Ո՞ր շարքի բոլոր երկրներն են բնական ռեսուրսների պաշարների առավել մեծ բազմազանությամբ:

- 1) Ֆրանսիա, Իտալիա, Բելառուս
- 2) Ռուսաստան, Ուկրաինա, Հայաստան
- 3) Կանադա, ԱՄՆ, Չինաստան
- 4) Ճապոնիա, Գերմանիա, Ավստրալիա

53

Բնական միջավայրի վրա մարդու բացասական ազդեցության օրինակ է.

- 1) բաց եղանակով շինանյութերի հանույթը
- 2) անտառաշերտերի ստեղծումը
- 3) ջրի օգտագործման փակ ցիկլերի ներդրումը
- 4) լանջերի դարավանդավորումը

54

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Սահմանային և տարանցիկ գետերի օգտագործումն ու պահպանությունը ամեն երկիր կազմակերպում է ինքնուրույն:
- 2) «Միջազգային Կարմիր գրքի» կազմման և հրատարակման աշխատանքները գլխավորում է Բնության և բնական ռեսուրսների պահպանության միջազգային միությունը(ԲՊՄՄ):
- 3) ՄԱԳՍԵ-ն զբաղվում է հողերի էրոզիայի դեմ պայքարի հիմնախնդրով:
- 4) Բնապահպանության ոլորտում երկկողմ և բազմակողմ միջպետական համագործակցության առաջին փորձն արել են Աֆրիկայի երկրները:

55

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Տեղային էկոլոգիական աղետները շրջակա միջավայրի համամոլորակային փոփոխությունների պատճառ դառնալ չեն կարող:
- 2) Էկոլոգիական աղետալի շրջաններն աշխարհում աստիճանաբար ավելանում են:
- 3) Աշխարհի խոշոր արդյունաբերական շրջաններին բնորոշ են սմոգը, թթվային անձրևները, աղմկային աղտոտումը:
- 4) ՄԱԿ-ի մասնագիտացված բնապահպանական կազմակերպություն է ՅՈՒՆԵՊ-ը:

56

Գրել այն հրաբուխների համարները, որոնք Եվրասիայում են.

- | | |
|-------------|--------------|
| 1) Կամերուն | 5) Ֆուձիյամա |
| 2) Դեմավենդ | 6) Կրակատաու |
| 3) Կոտոպախի | 7) Ռուխս |
| 4) Հեկլա | 8) Էրեբուս |

57

Գրել այն սարքերի համարները, որոնցով չափում են մթնոլորտային երևույթներ.

- | | |
|----------------|----------------|
| 1) բարոմետր | 5) պալետկա |
| 2) կուրվիմետր | 6) էխոլոտ |
| 3) ֆլյուգեր | 7) կողմնացույց |
| 4) սելսամոզրաֆ | 8) անեմոմետր |

58

Տրված են ծովային տաք հոսանքներ: Գրել Հնդկական օվկիանոսի ծովային հոսանքների համարները.

- | | |
|--------------------|----------------------|
| 1) Գվիանական | 5) Արևելաավստրալական |
| 2) Ասեդի հրվանդանի | 6) Սոզամբիկի |
| 3) Մուսսոնային | 7) Գվինեական |
| 4) Բրազիլական | 8) Գոլֆստրիմ |

59

Գրել Ճապոնական կղզեխմբի կղզիների համարները.

- | | |
|-------------------|-------------|
| 1) Նյուֆաունդլենդ | 5) Կյուսյու |
| 2) Հոկայդո | 6) Մախալին |
| 3) Կուբա | 7) Հոնսյու |
| 4) Ճամայկա | 8) Սիկոկու |

60

Գրել այն երկրների համարները, որոնք ԽՍՀՄ-ի կազմում չեն եղել.

- | | |
|--------------|--------------|
| 1) Բուլղարիա | 5) Լատվիա |
| 2) Մոլդովա | 6) Տաջիկստան |
| 3) Սլովենիա | 7) Էստոնիա |
| 4) Վրաստան | 8) Սլովակիա |

61

Գրել Կուրի ավազանին պատկանող վտակների համարները.

- | | |
|-------------|---------------|
| 1) Որոտան | 5) Իսաչենագետ |
| 2) Մարմարիկ | 6) Փամբակ |
| 3) Արփա | 7) Դեբեդ |
| 4) Գետիկ | 8) Հրազդան |

62

ՀՀ տրված ջրամբարների համարները դասավորել դրանց ջրի ծավալների աճման կարգով.

1. Սպանդարյանի 2. Ախուրյանի 3. Կեչուտի

63

Տրված են երկրագնդի ներքին կառուցվածքի մասերը: Վերադասավորել տրված հաջորդականությունը՝ սկսած ամենաստորին շերտից.

1. երկրակեղև 2. ասթենոսֆերա 3. միջնապատյան 4. միջուկ

64

Քելվինի քաղաքի (Հարավաֆրիկյան Հանրապետություն) միջին ամսական ջերմաստիճանների աղյուսակն է.

Միջին ամսական ջերմաստիճանը (°C)											
հունվ.	փետ.	մարտ	ապր.	մայ.	հուն.	հուլ.	օգ.	սեպտ.	հոկտ.	նոյ.	դեկտ.
21,2	21,5	20,3	17,5	15,1	13,3	12,5	13,2	14,5	16,3	18,3	20,3

Որոշել Քելվինի քաղաքի ձմեռային միջին ջերմաստիճանը:

65

Լեռան ստորոտին մթնոլորտային ճնշումը 680 մմ է, իսկ գագաթին՝ 330: Որոշել Լեռան բացարձակ բարձրությունը:

(66-67) Պետության բնակչության թիվը 40 մլն է: Գյուղաբնակների բացարձակ թիվը 16 մլն մարդ է, իսկ տարածքի մակերեսը՝ 200 000 կմ²:

66

Որոշել բնակչության միջին խտությունը:

67

Որոշել ուրբանիզացման մակարդակը:

68

Որոշել ցորենի ցանքատարածությունների մակերեսը(հա), եթե ցորենի համախառն բերքը 24000 տ է, իսկ միջին բերքատվությունը՝ 40 ց/հա:

69

Չինաստանի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Արդյունաբերության առաջատար ճյուղերից է մեքենաշինությունը:
- 2) Թեթև արդյունաբերության խոշոր կենտրոնը Շանհայն է:
- 3) Աշխարհի առաջատար երկրներից է պարարտանյութերի և ցեմենտի արտադրությամբ:
- 4) Հարուստ է ածխի ու երկաթաքարի պաշարներով:
- 5) Մննդի արդյունաբերությունը զարգանում է ներկրվող հումքի հիման վրա:
- 6) Մետաղաձուլական շրջանները հիմնականում տեղաբաշխված են երկրի արևմտյան շրջաններում:

70

Կոտայքի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Այս մարզում են Հատիս և Արայի լեռների հրաբխային կոները:
- 2) Թռչնաբուծությունն անասնապահության առաջատար ճյուղերից է:
- 3) Մեքենաշինության առաջատար ճյուղերից են հաստոցաշինությունը և սարքաշինությունը:
- 4) Արտաքին հաղորդակցությունն իրականացվում է միայն արևմուտքից արևելք ուղղությամբ:
- 5) Ընդերքն աղքատ է մետաղային օգտակար հանածոներով:
- 6) Գորգերի արտադրանքով հանրապետության առաջատար մարզերից է: